

ՏՈՔԹ. ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

1872-1948

Գրեթե անծանօթ մը ազգային շրջանակներէն ներս, բայց յարգուած գիտնական մը փարիզի փաթեթօնեան հաստատութեան կողմէ, ու իրականութեան մէջ կատարեալ փառք մը հայ բժշկական դասուն համար:

Երուանդ Մանուէլեան... անձամբ իրեն հետ ծանօթանալու առիթը չեմ ունեցած, բայց իր անունը մաքիս մէջ անջնջելի կերպով տպաւորուած կը մնայ շատ վաղուց, 39 տարիներ առաջ, Մոնթելիէի բժշկական համալսարանին սեմէն ներս մտնելէս անմիջապէս ետքը:

Այդ շրջանին բժշկական ուսման տեսողութիւնը հինգ տարի էր, որուն առաջին տարին բնական գիտութեանց յատկացուած էր. իսկ մնացած չորս տարիները՝ գոտ բժշկական հանգամանք ունէին:

Իսկ այդ քառամեայ ուսման կէսը՝ երկու տարին՝ մարդակազմութեան յատկացուած էր:

Տաղակալի է մարդակազմութիւնը, անկուն կամքի և սպառիչ աշխատութեան կը կարօտի կարենալ ծանօթանալու համար մարդկային կառուցուածքին հոյակապ ճարտարապետութեանը:

Ան կատարեալ լաբիրինթոս մըն է, որ ծնունդ կ'առնէ ոսկորներու, մկաններու, նեարդներու, երակներու և բազմաթիւ գործարաններու ամենաճարտար համադրութենէն:

Աշխատիլ պէտք է, չարաչար տքնիլ, որպէս զի կարելի ըլլայ երկու տարուան ընթացքին ընտելանալ այդ լաբիրինթոսի զանազան բաւիղներուն, ու անոնց մէջէն դուրս գալ առանց վհատելու և ուղղութիւնը կորսնցնելու:

Հսկայ քաղաքի մը պոլիտաներուն և փողոցներուն չափ բազմաթիւ են մարդկային կազմին մէջ խառնաձեւուող բաւիղները, ու քաղքենի փողոցներուն յար և նման՝ անոնցմէ իւրաքանչիւրը անուն մը կը կրէ, մեծաբերու համար Ֆրանսացի, Իտալացի, Գերման կամ Անգլիացի գիտնականի մը յիշատակն ու մարդակազմութեան անկէ ստացած նպաստը:

Սկսնակ ուսանողին համար, իբր ուղեցոյց

կը յանձնարարուէր Թեաթիւի քառահատոր ու բազմահազար էջոց երկը, որուն ծաւալը՝ սարսափազդեցիկ ըլլալու աստիճան զանգուածային երեւոյթ մը ունի:

Անառարկելի կերպով կարելի է ըսել, թէ այդ հատորներէն ամենատաղտկալին՝ Չղային դրութեան ուսուցման յատկացուածն է:

Չղային դրութիւնը, հիւսուածներուն ամենաբարդն ու դժուարամատչելին, հեղինակաւոր գիտնականներու տքնաշան պրպտումներուն շնորհիւ կարելի եղած է պարզաբանել: Բացառիկ կարողութիւններով ու տաղանդով օժտուած գիտնականներ միայն համարձակած են նուիրուիլ նեարդաբանական հետազոտութիւններու. այդ պատճառով անոնց անունները բացառիկ յարգանքով կը յիշատակուին, ու պէտք է խոստովանիլ որ սակաւաթիւ են անոնց մէջ ընտրեալները:

Երբ ձեռք առի Թեաթիւի Չղային դրութեան յատկացուած հատորը, սկսայ ներածականը կարգաւ: Հեղինակին կողմէ յիշատակուած Անթուան Ռանուիէի, Քամիլիոյ Կօլճիի, Մաթիաս Տիւուալի, Վանկէ Տիւլթէնի, Քէօլիկերի, և սպանիացի Սանթիակոյ Ռամոնի Քահալի մեծահամբաւ գիտնականներուն կողքին, նշմարեցի նաեւ հայու մը մականունը՝ Մանուէլեանինը:

Հպարտութեամբ լեցուած պահ մը կանգ առի այս անունին առջեւ, ազգային արժանապատուութեան խթանէն ոգեւորուած ուրախութեամբ անգամ մըն ալ կարգացի այդ անունը, կրկին կարգացի, ու բուն հետաքրքրութեամբ շարունակեցի ընթերցումս:

Մանուէլեան կը ներկայացուէր իբր Վարպետ Նեարդագէտ մը, Չղային դրութեան նրբին հետազոտութիւններու մասնագէտ մը, ու իրեն կը յատկացուէր քունի բարդ երեւոյթը բացատրող բնախօսական հանճարեղ տեսութիւն մը:

Ահա այդ օրէն ի վեր Ռամոնի Քահալի և Մանուէլեանի անունները մխրճուած մնացին յիշողութեանս մէջ:

Մին սպանիացի, միւսը՝ հայ, երկուքն ալ Չղային դրութեան նրբին փնտռութիւններուն մէջ ականաւոր դէմքեր, երկուքն ալ գրեթէ հաւասար չափով մթարուած Թեաթիւի նման Ֆրանսացի պատուական գիտնականի մը և հեղինակի մը կողմէ:

Բայց ո՞վ էր այս հայը, որ յաջողած էր փարիզի փաթեթօնեան հաստատութեան մէջ գնահատելի դիրք մը և անուն մը կերտել:

Չեմ գիտեր թէ ինչու ճիշդ չիմպիեցի խորացնելու իմ հետաքրքրութիւնս այդ ուղղութեամբ, ու գոհացայ հպարտութեամբ այս ազգակիցս ալ, դասել այն բազմաթիւ տաղանդներու շարքին, որոնք հայութեան բեղմնաւոր ծոցէն ծնունդ առնելով, օտար երկիրներու տակ հասակ կը նետեն, միջազգային համբաւի կը տիրանան ու արժէքի մը կը վերածուին:

Ջգացած ուրախութիւնս պահ մը տեղի տուաւ անտէր ու անտիրական, հայրենագուրի ժողովուրդի մը հոգեբանութեանէն բխող մեղամաղձովութեան, խորհելով թէ մի գուցէ այս հայն ալ, համբաւի տիրանալէ ետք, իր ազգութենէն հրաժարողներէն ըլլար:

Բարեբախտաբար անհարկի էր այս մտաւտանջութիւնս, ինչպէս որ առիթը պիտի ունենանք տեսնելու: Մանուէլեան հայ էր և հայ մնաց մինչեւ կեանքին վերջին օրը, առանց որ փառքի դափնիներն ու օտար մթնոլորտը զինքը ուժացումի առաջնորդէին:

Նոյնպէս, չեմ գիտեր թէ ինչու այդ հայը, իմ երիտասարդական խանդոտ մտասեւեռումիս առարկան դարձած պահուն իսկ, ինձ պատկեառաբար խոշոր դէմքով, ալեհեր մօրուքով, ընդունակ գիտնականի մը երեւոյթին ներքեւ, մինչեւ ան այդ թուականին, 1910-ին, 38 տարեկան նրբակազմ երիտասարդ մըն էր:

Այդ օրերէն ի վեր անցան քանի մը տասնեակ տարիներ, ու ինձ այնպէս կը թուէր թէ ան շատոնց մահկանացուն կնքած ըլլալու էր:

Պատահամբ ձեռքս անցաւ «Անահիտ» 1948 տարուան օգոստոս-սեպտեմբեր թիւը, անկէ տարուան օգոստոս-սեպտեմբեր թիւը, անկէ տեղեկացայ որ տակաւին մօտերս տեղի ունեցած էր Եր. Մանուէլեանի մահը, 1948 տարուան սկիզբները:

Այն առիթով պարոն Ա. Զօպանեան, Եր. Մանուէլեանի և Էտկար Շահինի անունները քով քովի կը դնէ, կարծես յետ մահու իսկ ամբողջութեամբ համար այդ երկու հանճարեղ հայեա

րուն միջեւ վաղուց անտի գոյութիւն ունեցած բարեկամական կապը, ու ինքն ալ իր կարգին՝ սգակիր բարեկամի հանգամանքովը՝ իր գաղաւթը գրելը սպաս կը դնէ անոնց խնկելի յիշատակը յաւերժացնելու համար: Էտկար Շահինի անունն ու համբաւը ծանօթ է բոլորիս, սակայն նոյնը չէ Մանուէլեանի պարագան, այդ պատճառով պարտք կը համարիմ «Բազմավէպ»-ի էջերէն ծանօթացնել հասարակութեան բոլորովին անտեսուած այս մեծաաղանդ հայուն կեանքն ու գործը:

Պարոն Ա. Զօպանեան առաջին անգամ չէ որ կը գրէ Եր. Մանուէլեանի մասին. իր վերջին յօդուածը պարզ վերջիւում մըն է նախորդ գրութիւններուն, դժբախտաբար զանոնք իմ տրամադրութեանս տակ չունենալուս, համարաւորութիւնս պիտի ըլլայ անբուական ու թերի, բայց այս սահմանափակումին մէջ իսկ, այնքան առատ են տրուած տեղեկութիւններն ու լուսաբանութիւնները, որ այդքանով ալ կարելի է գոհանալ, երեւան հանելու համար Մանուէլեանի կեանքին ցայտուն գծերը:

Նշնդավայրով՝ Պոլսեցի, ծնած 1872-ին, կրթութեամբ և ուսումով՝ կեդրոնականցի, ընդունի կոչումով՝ գիտութեան և գրականութեան տաղանդաւոր սպասարկու մը:

Կեդրոնականէն կը սկսին Պ. Ա. Զօպանեանի յուշերը Մանուէլեանի մասին: Դասընկերներ եղած են, բայց անկէ ալ աւելի բան մը, հոգեկան և իմացական ձգտումներով իրարու սերտօրէն հաղորդակից մտերիմներ:

Նախ քան իրենց կեանքի ասպարէզին մէջ նետուիլը, անոնք հետեւեալ ուխտը կ'ընեն. «Չանալ ոչ միայն մեր սիրելի ազգին ծոցին մէջ, այլ և մշակոյթի միջազգային ոլորտին մէջ, ապացուցանել հայ ցեղի մտաւոր ոյժը»: մէջ, ապացուցանել հայ ցեղի մտաւոր ոյժը»:

Յետագային, փարիզի մէջ, այդ ուխտը կը վերանորոգուի, կը վերածուի երբեակ համաձայն վերանորոգուի, որուն նորընտիր անդամը, ուրիշ նութեան մը, որուն նորընտիր անդամը, ուրիշ տաղանդաւոր հայ մըն է՝ Էտկար Շահին:

Պէտք է խոստովանիլ, թէ անոնցմէ իւրաքանչիւրը արժանաւորապէս կատարեց իր խոստումը, չիւրը արժանաւորապէս կատարեց իր խոստումը, մին՝ իբրեւ գիտնական, միւսը՝ իբրեւ գրագէտ, իսկ երրորդը՝ իբրեւ նկարիչ:

Անոնք միասնաբար ականաւոր դարձան, ոչ միայն իբրեւ տաղանդ, այլ արժանապատիւ ազ-

կու տայ. «Առաջին անգամն էր որ այդ համալսարանին բեմէն ֆրանսական գիտութեան հռչակաւոր ներկայացուցիչներէն մին հայ գիտունի մը ինքնուրոյն գնահատումը կը կատարէր»:

Մանուէլեան քառասունեակէն տարի շարունակ իր կեանքը նուիրեց գիտական պրպտութեանը. իր թափած ճիգերը լիովին արդիւնաբեր հանդիսացան զգայացունց նուաճումներով, ու անոնց վրայ հիմնուած անհատական համբաւը այնքան մեծցաւ, որ զինք անցաւ իր անուան շրջանակը ու դարձաւ ազգային պարծանք մը:

Հայրենաբաղձութեան բուն զգացումը պահ մը Մանուէլեանի աչքերը դէպի Երեւան դարձուց, ու 1932-ի կաթողիկոսական ընտրութեանց ընթացքին, Պ. Ա. Զօպանեանի առաջարկովը Հայաստանի առողջապահական գործավարը հանդիմանալով ընդ առաջ գնաց Մանուէլեանի Հայաստան այցելելու փափաքին, ուր նպատակ ունէր դասախօսութեանց շարք մը կազմակերպել:

Բայց Մանուէլեանի կողմէ առաջարկուած ֆրանսացի բարեկամի մը ընկերակցութիւնը դէպի Երեւան, արգելք հանդիսացան այդ փափաքին իրագործման:

Մանուէլեանի գիտական նուաճումներուն արձագանքը Հայաստան հասած էր ոչ միայն արտասահմանի հայ թերթերու միջոցով, այլ նաեւ ուս գիտնական Պետրեւիչի կողմէ կատարուած յիշատակութիւններու շնորհիւ:

Հայաստանի կառավարութիւնը 1946-ին Մանուէլեանը թղթակից անդամ կ'անուանէր Հայաստանի գիտութեանց կաճառին, ան անդամ էր նաեւ Փարիզի Փասթէօնեան հաստատութեան ընտրական ժողովին:

Յառաջացեալ տարիքին ու խաթարեալ առողջութեանը բերմամբ, ժամանակէ մը ի վեր հանգստեան կոչուած էր, բայց այս հանգամանքը երբեք արգելք չեղաւ որ մինչեւ կենացը վերջին օրը ան կապուած մնար Փասթէօնեան հաստատութեան ու շարունակէր իր գիտական պրպտութեանը:

Մանուէլեան քանի մը տարիէ ի վեր կը տառապէր ստամոքսի խոցէ մը - Իշլուք - ու զոհ գնաց այդ հիւանդութեան, անխոհեմ կերպով մը հետեւանքով տեղի ունեցած բուռն արիւնահոսութեան մը: Մեծ մարդոց դիակին առջեւ շատ աւելի ազատօրէն ու առարկայօրէն կարելի է բանաձեւել անոնց արժանիքներն ու թերութիւնները, քան թէ իրենց կենդանութեանը:

Առ հասարակ այդ կարգի մարդիկ նկարագրով խիստ համեստ կ'ըլլան, խոյս կու տան փառաբանութիւններէ, ու տեսակ մը յարգանք պարտադրելով իրենց շուրջիներուն, փափկանկատութեան վերապահ միջոցով մը կը ստեղծեն իրենց անունին շուրջ:

Բայց երբ կ'անշնչանայ հանճարը, դիակի մը կը վերածուի, այդ դասակարգի նկատմանը վերջ կը գտնեն, ու դազադին առջեւ խոնարհողներուն բերնէն ելած արտայայտութիւնները կ'ըլլան սրտաբուխ, անկաշկանդ, ու շատ աւելի հարազատօրէն կ'ընդգծեն անհետացողին իրական արժանիքները:

Մեր նպատակէն դուրս է յետ մահու գրուած յօդուածները կամ դազադին առջեւ արտաստուած դամբանականները ամբողջապէս յիշատակել:

Անցողակի կերպով Ժ. Մակունի գրութենէն միայն մէջբերումներ ըրինք, բայց պիտի չկարենանք զսպել այն խանդավառութիւնը որ զգացինք Փասթէօնեան հաստատութեան դերանորդին տղթ. Տիւ Ժառիք տը լա Ռիուիէի կողմէ հայոց եկեղեցիին մէջ արտասանուած դամբանականին պարունակութիւնը կարգաւէն, ու նկատի ունենալով անոր ներշնչած հոգեպարար տպաւորութիւնը, ու չկարենալով զայն ամբողջապէս արտատպել, կը զրկենք մեր ընթերցողները Անահիտ-ի 1948 թիւ 1, էջ 36-7, ուր պր. Ա. Զօպանեան հրատարակած է արդէն:

Օտարի մը կողմէ մատուցուած յարգանքի այս ջերմ արտայայտութենէն ետք, կը մնայ մեզի ճշդել մեր պարտականութեան ու գորգորանքի բաժինը:

Այս տեսակէտով, պէտք է խոստովանիլ թէ առ հասարակ մեր բոլոր արժեքներուն հանդէպ դատապարտելի անտարբերութիւն մը ցոյց կու տանք. հիմուց ի վեր մեր վերաբերմունքը եղած է բացասական, այդ պատճառով ալ մեր ազգային պարծանքներուն շատերուն յիշատակը, ժամանակի ընթացքին հիւժելով ու թառամելով, չըսենք ամբողջապէս կորսուած, բայց մի մասով տկարացած են ու ազգովին տուժած ենք այս թերացումէն: Ահա մեր եզրուածայն գաղութին փարթամ անցեալը, ուր բացառիկ արժանիքներով փայլած են հայ տաղանդներ, բայց չունինք համադրեալ կոկիկ աշխատասիրութիւն մը հայութեան համար պատուաբեր այդ անցեալը մոռացութենէ փրկող: Ահա տաղանդաւոր ուրիշ

հայ մը՝ Էտկար Շահին՝ մեզմէ աւելի օտարները իրմով հետաքրքրուած են ու իր մասին գրած. իր մահէն ի վեր չգտնուեցաւ գուրգուրու ազգակից մը, որ գոնէ հատորի մը մէջ տմիտփէր այդ գրութիւնները ու վերլուծէր միջազգային համբաւ վայելող մեր այս տաղանդաւոր արուեստագէտին բացառիկ կարողութիւններն ու ստեղծագործութիւնները:

Նոյն տիպի համայնապատկերին առջեւ կը գտնուինք գրեթէ բոլոր մեր մշակութային մարզերուն մէջ, տակաւին անտիպ կը մնան մեր շարք մը բժշկարանները, վերջին քսան տարուան ընթացքին է որ Ամիրտովլաթի կարեւոր երկերը տպագրուեցան, բայց ձեռագիր վիճակի մէջ կը գտնուին Պունեաթի, Ասարի և Գալուստի գործերը, իսկ Միխիթար Հերացիի Միխիթարութիւն Չերմանցը, գերմանացիի մը կողմէ գերմաներէնի թարգմանուեցաւ...:

Հայաստանի մէջ տակաւին քանի մը տարի առաջ գրի առնուեցաւ հայ բժշկութեան պատմութիւնը, դժբախտաբար Պրոֆ. Լ. Յովհաննէսեանի հինգ հատորոց հոյակապ այդ ուսումնասիրութիւնը անմատչելի կը մնայ գաղութահայութեան:

Մէկ խօսքով, անտարբերութեան կամ խռնդոտներու ազդեցութեամբ, կը կաղայ մեր մշակութային յառաջդիմութիւնը:

Բայց մեր մեծագոյն յանցանքն ու մեղքը անտարբերութիւնն է:

Մէկ ու կէս տարիէն աւելի է Մանուէլեանի մեռելը. ոչ ոքին մտքէն կ'անցնի այս հեղինակաւոր հայուն գրութիւնները, զեկուցումները, որոնք ցիր ու ցան կը գտնուին բժշկական հանդէսներու մէջ, ի մի հաւաքել, դասաւորել, ու շքեղ հատորի մը ձեւին տակ ներկայացնել մեր վաստակաւոր հայրենակիցին կեանքն ու գործը գիտական աշխարհին:

Աւելորդ է ըսել, թէ այդ հատորը կարելի է պատշաճօրէն պնդել ու գեղազարդել, հոն գետեղելով նաեւ այն բոլոր ներբողականները որոնք գրի առնուած կամ արտասանուած են, զանազան առիթներով, ականաւոր գիտնականներու կողմէ:

Այս մասին Պ. Ա. Զօպանեան շատ արդարօրէն հետեւեալ դիտողութիւնը կ'ընէ. «Յանկալի է հոգեւեալ դիտողութիւնը կ'ընէ. «Յանկալի է որ այդ զրբոյկն ու այդ հատորը որ և է ազգային հայ մը կարենայ հպարտութեամբ ցոյց տալ օտարներուն ու մասնաւորապէս՝ ֆրանսացիներուն»:

Տրամադրութեան տակ կը գտնուի Revue Ciba-ի 28 թիւ համարը, որուն վերնագիրն է Le développement de la technique de coloration histologique:

Հեղինակը՝ Պրոֆ. Էրիք Հինթշ՝ դասախօս Պետի համալսարանին, հանգամանօրէն կ'ուսումնասիրէ հիւսուածաբանական հետազոտութեանց մէջ կիրարկուած զանազան տեսակի ներկերու գործածութիւնը, կանգ կ'առնէ մասնաւորապէս շրջային դրութեան մարզին մէջ կատարուած փորձերուն վրայ, կու տայ Ռաուիէի, Կոլմի, Ռամոնի Քահալի անունները, կը յիշատակէ այս երկու վերջին գիտնականները, որոնք 1906-ին Նոպէլեան հաստատութեան կողմէ վարձատրուելին, բայց անունն իսկ չի յիշատակեր մեր հայրենակիցին: Կարելի չէ առանց վրդովումի համակերպիլ այս զանցաբանութեան, որուն պատասխանատուն ոչ թէ յօդուածագիրն է՝ այլ նախ մեր ողբացեալ հայրենակիցը, որ զլացած է իր վաստակը հատորի մը մէջ գետեղելու, ապա մենք՝ որ նոյնքան անփոյթ կը գտնուինք այդ տեսակէտով: Միթէ գիտական պաշարով նուազ զարգացած մէկն է Մանուէլեան, միթէ նուազ ճարտար հիւսուածաբան մըն է:

Բնաւ երբեք, կատարեալ հեղինակութիւն ու մեծութիւն մըն է մեր հայրենակիցը, այս բանը կը վկայեն ու կը հաստատեն Մաթիաս Տիւուալի հեղինակութիւնը ունեցող ուսուցչապետներ ու փարիզի Փասթէօնեան հաստատութեան զէմբերը: Կանող շքախումբին ամենակարկառուն դէմքերը:

Ան ալ արժանի է յիշատակութեան, ան ալ արժանի է վարձատրութեան, ան ալ արժանի է միջազգային գնահատանքի, բայց որպէսզի կարելի ըլլայ անոր համբաւը փարիզի Փասթէօնեան հաստատութեան շատ աւելի հեռուները ճառագայթել տալ, պէտք է որ անոր գիտական վաստակը շքեղ հատորի մը մէջ ամփոփուի, ու մատչելի դառնայ աշխարհի բոլոր գիտական կեդրոններուն:

Մանրէաբան ըլլալու է կարենալ գնահատելու համար հիւսուածքներու մէջ ֆրանկախօտ մանրէն երեւան հանելու դժուարութիւնները, ու այս ուղղութեամբ Մանուէլեանի յղացած գործերը:

Հիւսուածաբան ըլլալու է ըմբռնելու համար թէ ո՞րքան դժուար է շրջային դրութեան պատրաստութիւններուն ներկելը, մասնաւորապէս

L'imprégnation argentique կոչուած գրութիւնովը, որ է ըսել նիքրար տ'առժանի միջոցով կատարուածը:

Բացառիկ ճարտարութեան, անհատական ձիրքի, երկարատեւ փորձառութեան կը կարօտին ֆրանկախտի մանրէն երեւան հանելը, անոր այլազան ձեւերուն ինքնութիւնը հաստատելը, ինչպէս նաեւ ջղային դրութեան մանուածապատ լաբիւրինթոսին մէջ ներկերու կիրարկումը և ձեռք բերուած արդիւնքներուն լուսաբանութիւնը:

Մանուէլեան այդ մարգերուն մէջ հանդիսացաւ անմրցելի րէքնիսիէն մը ու մեծատաղանդ գիտնական մը:

Իր կենացը վերջին տարիներուն, անոր մէջ երեւան եկաւ բանաստեղծն ալ, ֆրանսերէն լեզուով գրուած ոտանաւորներուն հաւաքածոն՝ Օմպլը գէ քլարթէ՝ որուն մէկ մասին մէջ հայու

սիրտն է որ կը բաբախէ, լոյս տեսաւ իր մահէն ետք, բարեկամին և արուեստակիցին՝ Տոքթ. Փ. Սեկենի յառաջաբանովը:

Օտարներու կողմէ կատարուեցաւ յետ մահու այս յարգանքը, մեզի կը մնայ շտապել, չսպասել որ ուրիշները կատարեն մեզի վիճակուած պարտականութիւնը:

Ի զուր տեղը չէ ըսուած թէ «Մի գիրք մի ազգ է». օր առաջ պէտք է Մանուէլեանի գիտական վաստակը գրքի վերածուի: Այս ձեռնարկով թէ մեր հայրենակիցին յիշատակը յարգած կ'ըլլանք, և թէ հայութեան վարկը կը բարձրացնենք:

Կը խորհինք թէ այս ազգագուտ գործը ձեռնհասօրէն կրնայ իրականացնել Փարիզի հայ բժշկական միութիւնը, որուն անմիջական տրամադրութեան տակ կը գտնուի Եր. Մանուէլեանի գիտական ժառանգութիւնը:

Տոքթ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՄԷՋ

Ամեն անգամ որ կու գամ եւ քափառիկ նոճեաց տակ,
Յոգնում մը նոր գիւ ընդհուպ կը հաւակի
նշխարէն,
Յիշատակներ իրենց նոչր քեւերն ինձի
կ'երկարեն՝
Ամեն անգամ որ կու գամ եւ քափառիկ նոճեաց տակ:

Այգարացիներ չոչրերուն կը դիտեմ խաղն ու ըստուներ,
Երկիրն ամբողջ հրդեհ մ'է բողբոջումի մէջ
բոյրի,
Վարդաստանին մէջ հոգիս փոքրիկ տխրակ
մ'է ծաշի,
Այգարացիներ չոչրերուն կը դիտեմ խաղն ու ըստուներ:

Կոչնակներուն կը լրսեմ աղապատանքն անձկագին,
Անչափելի խիւղի մէջ դուն կը ցնծաս, ո՛վ հոգիս,
Ի տես Հայոց Կղզեակին գեղեցկութեան և փառքին:

Թող փառքը ըրայ անփոփոխ յաւերժութեան պէս վերին,

Ո՛վ դուն ծովուն յեղեղուն վազքին վրայ
բարձրալիզ
Կանգնած փարոս մեր ցեղի իմացութեան և յոյսին:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

Ս. Ղազար, 19 Յունիս 1949

Գ Ե Տ Ա Ռ

Գետունն է մրրկոտ իմ հոգիս
Խօջ չոչրերով գարնանային.
Այգեւետ ձաւքուն վրայ կեանքիս
Ծիծաղկոտ դուռներ կը բացուին:
Կ'անցնիմ սրտիս ձրագր բռնած
Որ ամենքին տամ սեր և յոյս.
Ըրայ աշունը ոսկեմած
Ընծայարեր իմ մեռքերուն:
Իսկ երե կարօտ եւ մրնամ
Միկնէ մահ, Նայիրի երկրին.
Թող ամեն երգիչ իր գինին
Ընկէ բաժակով դառնա՛մալ.
Եւ յիշէ որ բաց աչքերուն
Ձե քափանցեր մուր հողն օտար.
Եւ քե հոգիս է միշտ մրրկուն
Գարնանագայր ինչպէս Գետուն...

ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ

Թո՛ղ քար կտրիմ, երե իրեն պէս վրձիտ
Չըլլայ հոգիս առաջօտուն ոսկերով.
Եթէ ծունկի եկած չըլլամ՝ միամիտ
Տըղու մը պէս՝ իր առաջին դիւրանքով:

Եւ կուրաման րո՛ղ իմ աչքերու, երե
Իր սիւներուն չրտնակն հրաշքն անսահման.
Քանդակներուն ոգին խոնկէ ու վարդէ
Չըլլայանքի ըստուերին մէջ իրիկուն:

Ա՛յ ո՛ւ մէկ խօսք իմ շրթներէն երգեն,
Այս երկիւղած ուխտաւորին աղօրքին,
Երե խորհուրդը բացարձակ չըծաղի...

Իսկ երե յոյսն ողորդ սխտորս համակ,
Ըրամ, վանքին հայրենաբոյր շոքին տակ,
Փոխակերպուած փոքրիկ աղբիւր մը ոսկի...

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

Ե Ղ Ե Ր Ե Ր Գ

Փորիկն Սեղա վարդաբանին
յիշատակին:

Գիշերն ինկաւ ընկերուն վրայ,
Դռնուն է խաւար...
Ո՛չք եւ փոքրիկս, ո՛չք եւ հիմայ
Մէն ու մոլար...:

Գիշերն ինկաւ կոյր աչքի պէս
Ու ցօղ կու ըստ,
Հովը կ'երգէ ողբ մ'աղեկիզ
Դըրանս վրայ:

Կիրակի մ'էր երբոր գացիր,
Ըրայ ու ձա՛ման,
Ծաղկած էին կակաւներն հիւր՝
Դաշտին կանանց:

Հիմայ անձրեւ, մեզ ու մըրն,
Չորս դին սարսափ...
Շուն մը կ'ոռնայ, ու պահն է ուշ,
Կ'երբամ ըշտայ:

Ո՛վ անցորդներ որ կը շտապէր
Անձրեւ յիշած,
Տեսնէր կորսուած աղբիւրն մ'հեք
Տեղ մը յանկարծ...:

Ո՛ր դըրան դեմ գրչոյն հակած
Կը հեծեճէր,
Ո՛ր պատին տակ մին վախեցած
Ձիւ կը կանգէր...:

Աստուածամայր, գրքա՛ սրբոյս,
Մայր եմ քեզ պէս.
Շո՛ւտ, այս գիշեր գրտի փոքրիկս
Իմ վրչտակիզ:

Աստուածամայր, դուն որ բացիր
Լի՛մ մ'արտասուք՝
Ի՛նչպէս կրնաս անկարեկիր
Գիտել մօր սոչ:

Ո՛վ մուր վերջու զըժոխային...
Ուռներն հրձիգ՝
Այն օրն ա՛յնպէս սասանեցին
Երկիր, երկիր...:

Անձր վայրկեան... քաղաքն ամբողջ
Խո՛ճապահար
Փախուտ կու տար... մեռաւ ու ողջ
Խաւնուած իրար...:

Վիշապաբէ օղանաւեր
Շանքագայր՝
Կը տեղային մահ ու աւեր
Ամբոյն ի վար...:

Աւա՛ղ, ի՛նչպէս հաւնոգութիւն արդ,
Թե սատղերուն
Գիշերն է գոցէ աղբիւր իմ վարդ
Հեռնէն, հեռնէն...:

Եւ կամ փոշի դարձած ամիւնն
Ա՛յ կը հանգչի
Թերթերուն վրայ ծաղիկներուն
Անքրքանքի...:

Ո՛ւ, կը նիւնեմ, մղձաւանջ է,
Կ'անցնի շոտով
Կրնամ քաղել յոյսը միւրե
Խոր խաւարով: